

ԹՈՒՍԱՏԱԿԻ ՍՈՅԱԼԻԽԱՏԱԿԻ ՓԵԴԵՐԱԾԻՆԻ ԽՈՐՀՐԴԱՑԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պրոլետարներ բռլոր եքաբների, միացէր.

2586



ԲԱԳԻ 26 ԿՈՄՄՈՒՆԱՐ-ԸՆԿԵՐՆԵՐԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՅ  
418

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՅԻ



ՀՐԱՄԱՆԱՀԱՐԱՐԵԼՈՒ

№ 28

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՍԻԱՐԻԱՏԻ

№ 28

ՄԱՍԿԻՆ — 1919

Տեղաբնի Կենտրոն. Համական Պոմիութիւն, Մուսա, Արժեանսիւն. թ. 2  
Tipografia Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск. п. 2

26 ԿՈՄՄՈՒՆԱԲՆԵՐԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ...

Հիմա  
4/8

Մի տարի առաջ գնդակահարւել են մեր 26 բնկերները,  
Կովկասեան պրոլետարիատի 26 լաւագուն պարագլուխները...

Անզիական իմակերիալիստները՝ ժամանակակից եւրոպա-  
կան «քաղաքակրթութեան» այդ միշտ գոռող ներկալացու-  
ցիչները չեն փատահացել պարզորոշ կուել լեզափոխութեան  
դէմ: Նրանք չեն համարձակւել բացարձակ կերպով դատապար-  
տել մեր բնկերներին: Գծում և ամերգի աւագակների նման  
նրանց համհարգները խումել են բանտ, և ալգտեղից հանել են  
թաղւա 26 կոմիսարներին՝ իրը թէ Մէշեղ ուղարկելու հա-  
մար...

Անզիական սառը դահճճներին լայտնի էր, որ ամենայն  
մի բացորոշ բէպրէսոսիա բանտարկւածների նկատմամբ կարող  
է օրոշ անբաւականութիւն առաջ բերել ոչ միայն Տուրքես-  
տանի և Անդրկովկասի բանտորութեան մէջ, այլև անզիական  
պրոլետարիատի շրջաններում:

Միւս կողմից անզիացիներին բայտնի էր և այն, որ ոչ  
մի դատարան չի կարող նոյնիսկ բուրժուական օրէնտղու-  
թեան մէջ գանել որևէ իրաւական հիմունք 26 կոմիսարների  
դատապարտութեան համար:



Եւ ահա զգալով այդ բոլորը, բրիտանական իմպերիալիստները կովկասեան լեղափոխութիւնը զլխառելու նպաստի կով որոշում են սպանել այդ լեղափոխութեան տմենախիզախ և ուժեղ պարագութիւներին:

Ու այդ որոշումը կատարւում է:

Կէս-դիշերին, գաղաքողի բանտ են մտնում «մեծ» և միշտ «վեհանձն» Ալլիօնի ստոր սպասաւորներն ու դուքս են հանում այդտեղից իրենց ձեռքն ընկած՝ 26 անգէն ասպեաներին...

Եւ ապա նետելով վագօն ուղղում են դէպի հեռաւոր մի վայր, դէպի խուլ մի անկիւն:

Հարկաւոր էր սպանութիւնը կատարել հեռու, ամենից հեռու—որպէսզի ոչ ոք չկարողանար որևէ արատ նետել անդիմական «կուլտուրերեգերների» վրայ:

Հարկաւոր էր ածեն ինչ ժամկել, որպէսզի բոլորը համազւեն, որ ոչ մի սպանութիւն չի կատարւել...

Եւ այդ բոլորը նկատի առնելով անգլիացիները կանգնեցնում են անսպատի միջով վաղող խորհրդաւոք մռալլ դնացքը հէնց անսպատի մէջ, միշտ դեղին և աւազու դաշտերով շրջապատւած մի խուլ գիւղի մօտ... Ու հէնց այդտեղ էլ գնդակահարում են 26 կոմիսարներին, 26 անվախ և խիզախ կոմմունարներին: Ու այդտեղ էլ, Տուրքեստանի աւազու այդ գիւղի մօտ էլ թագում են մեր ընկերներին...

\* \* \*

Սպագէս են վարւել նրանք, որոնք նոյնիթէ այսօր վատահանում են բարբառել «կուլտուրալի» և մարդկութեան» մասին...

Ալդապէս են դործել նրանք, որոնք լանուն եւրոպական

«Քաղաքակրթութեան» բողոքել են Խորհրդավիճն Հանրապետութեան գիտատուրայի դէմ...

Երբ Ռուսաստանի բանտօրու-գիւղացիական կառավարութիւնը ժաղովրդական հարստութիւնը թալանողներին՝ ստորսպեկտիանտներին՝ զսպելու համար պատմել է գրանց—«կուլտուրական» Անդիիան իր պարագն է համարել բարձրաձայն բողոքել Խորհրդավիճն իշխանութեան դէմ...

Երբ՝ բազմաթիւ գիշատիչներով, գեներալներով, ցարական ժանդարմաներով և իմպերիալիստական գօրքերով շրջապատւած պրոլետարական Ռուսիան իր հակառակորդներին առավոլելու նպատակով պատմել է գրանցից այն մի քանիսին, որոնք զէնքը ձեռքին ելել են ժողովրդական իշխանութեան դէմ, կապիտալիստական Անդիիան նոյնպէս բողոքել է յանուն «մարդկութեան»...

Սակայն ինքը, այդ կեղծաւոր, գծուծ և ստոր իմպերիալիստական պետութիւնը շարունակ օժանդակել է հակացեղափոխականներին, աւերել է ռուսական գիւղեր և քաղաքներ, քանդել է երկաթուղիներ ու կամուրջներ և նպաստել է այն բլոկադային, որի շնորհիւ այսօր տանըլում է համայն Ռուսիայի աշխատաւորութիւնը...

Ինքը՝ այն պետութիւնը, որը համարձակւել և համարձակւում է խրատներ կարգալ մեծամասնականներին, ձեռնարկել է ամենակեղաստ և զգւելի քաղեր քաղաքակրթութեան դէմ...

Ու այդ քաղերից ամենաստոքն է եղել 26 կոմիսարների դադունի սպանութիւնը:

Այդ սպանութիւնը պիաի մտնէ ալսուհետե կոմմունիզմի պատմութեան մէջ, որպէս նրա ամենացայտուն և կարմիր էջերից մէկը...

Այդ սպանութիւնը պիտի լիշեցնէ անգլիական իմպերիալիզմի կեղծաւոր և երկդիմի քաղաքականութիւնից խարւածներին՝ որ գիշատիչ կապիտալիզմի սպասաւորները ամենեին չեն տարբերութ վալրենի, ճիշապետական դեսպօտիզմի դժան ժանդարմներից...

---

## ՍՈՑԻԱԼ-ԴԱԻՌԱՆՆԵՐՆ ԵՒ ԲԱԳԻԻ ԴԷՊԲԵՐԸ

1918 թ. սեպտեմբերի 20-ին, Տաւրքեստանում՝ աւաղստանապատճերում ընկած մի խուլ գիւղի մօտ գնդակահարւել են Թագւի լեղափոխական պրոլետարիատի 26 ներկայացուցիչները։ Այդ սխրագործութիւնը կատարւել է անքան զաղրելի կերպով և այնքան արտասովոր պարմաններում, որ գրաւել է նոյնիսկ Կովկասեան սոցիալ-դաւաճանների ուշագրութիւնը։ Թագւում հրատարակող էսէրական «Աշխատանքի Դրօշակ» թերթը տպել է մի էսէրի զիտողութիւնները 26 կոմմունարների գնդակահարման մասին և իր կողմից շտապել է օբողոքելց անգլիական իմպերիալիստների դէմ։ Սակայն էսէրական արդ թերթը ոչինչ չի տուել այն մասին, որ այդ գնդակահարմանը կաղմնակի կերպով նպաստել են հէնց էսէրական կուսակցութեան ներկայացուցիչները։

Յայտնի է, որ Թագւում խորհրդակին իշխանութիւնը ընկել է շնորհիւ սոցիալ-դաւաճան հոռոնքների՝ մենշենկական, էսէրական և դաշնակցուկան կուսակցութիւնների դաւաճանութեան։ Այդ կուսակցութիւնները սկզբում յայտարարել են, որ խորհրդակին իշխանութեան կողմնուկիցներ են և ալգափսով կարողացել են գրաւել պրոլետարական լայն մասսաների ուշագրութիւնը։ Այդ կուսակցութիւնները շղթշել են իրենց հակայեղափոխական էսէրթիւնը Խորհրդակին լոգունդներով և կարողացել են ալգափսով ձայներ ստանալ Թանւորական և Զինւորական Պատգամաւորների Խորհրդի մէջ։

Սակայն մտնելով խորհրդի մէջ նրանք հէնց ալգանդ, հիմնարկութիւնների մէջ կատարել են դաւաճանական գործ։ Նրանք ոչ թէ ածրապնդել են խորհրդակին հիմնարկութիւնները, ալ թուլացրել Ոչ ոքի համար զաղանիք չէ ա'յն, որ զորքի մատակարարման գործը կենարժուացած է եղել գրեթէ

բացառապէս սոցիալ-դաւաճանների ձեռքում: Եւ հէնց գրանք էլ լեցնելով ռազմա-մատակարարողական հիմնարկութիւնները դաւաճաններով՝ քայլալի են քաղաքացիական պատերազմի համար այնքան կարևոր ֆակտորը:

Միւս կողմից միենոլուն հոսանքները կազմակերպել են հակալեղափոխական ողով Խորհրդի կարմիր զօրբանակի օֆիցիւրական մասերը: Եւ հէնց այդ մասերի օգնութեամբ էլ նրանք քայլալի են մեր զօրաբանակի ընդդիմաղբութեան ոյժը: Հայդաշնականների լայտնի «հերոսը»՝ Համազասպը իր օֆիցիւրների հետ միասին լիտ է քարշել զօրամասերը ճիշտ այն պահուն, երբ անհրաժեշտ և կարելի իր ըշել նահանջող հակառակօրդին: Կարմիր զօրաբանակի տարրալուժումը սկսում է մի կողմից շնորհիւ անկանոն բժշկական-սանիտարական կողմակերպութեան (որը, ինչպէս շեշտեցինք լանձնարարւած էր սոցիալ-դաւաճաններին), իսկ միւս կողմից շնորհիւ հայկական համազասպեան զօրամասերի դաւաճանութեան:

Աւելի ևս կարևոր գեր են կատարել Բագրի սոցիալ-դաւաճանների այն ընկերակիցները, որոնք գործել են Բագրից դուրս՝ Տիբիսում: Դրանք ոչ միայն չեն կռւել տաճկական իմպերիալիստների դեմ, այլև մեծագոյն չափով օժանդակել են բէգական հակալեղափոխութեանը: Դաշնակցականների երկու ներկայացուցիչները՝ պ.պ. Թ. Յարութիւնեան և Մ. Արզումաննեան նոյնիսկ իրենց պարտքն են համարել բարոյական աշակցութեամբ խրախուսել տաճկական իմպերիալիստներին:

Եւ այդպիսի ծանր և արտասովոր պայմաններում Բագրւայ մեծամասնականները կարողացել են անուամենայնիւ կազմակերպել ուժեղ կարմիր զօրաբանակ, որը իր սեփական որժերով կռւել է Բագրի խորհրդակին իշխանութեան բոլոր հակառակօրդների դեմ:

Սակայն խորհրդի մէջ գործող սոցիալ-դաւաճանները չեն դադարեցրել իրենց դաւաղբական զօրծունեութիւնը: Նրանք օգտագործել են Բագրի բնակչութեան սարսափը ու խորամանկ կերպով մէջանակ են ըերել «անզմիացիների» խնդիրը: Երբ Համազասպը լիտ է նահանջել, ասպարեզի վրայ է դրւել

մի նոր խնդիր: Բոլոր սոցիալ-դաւաճանները միաբերան պաշտպանել են այն միտքը, թէ անհրաժեշտ է անդլիական օգնութիւն: Նրանք որել են աւելին ևս: Դաշնակցականները ուղարկել են իրենց ազէնտներին Պարսկաստան և «հրաւիրել» են անդլիացիներին: Դաշնակցականների հետ միասին միենոյն գործելակերպն են վարել նաև Էսէրներն ու մենշերիկները: Սոյտ ազիտացիան ունենում է որոշ հետևանք: Յոգնած և սոված զօրքերի համար Անդլիան դուքնեկան էր, որպէս մի նոր կատարելատիպ օդնական: Բոլոր զինւորներին թւում էր, թէ անդլիացիները կդան իսկոյն և իրենց դիւժական ոյժերով ոչ միայն կը զարդեն տաճկական իմպերիալիստներին, այլև կատարելապէս կապահովեն քաղաքի կեանքը: Բոլոր բանւորներին թւում էր, թէ անդլիացիներից յետոյ Բագուն կազմաւի ոչ միայն իր անկոչ թշնամիներից, այլև ահագին քանակութեամբ հաց և պարենաւորում փստանաբ: Բոլոր նաւասահիներին թւում էր, թէ անդլիացիները կազմաեն Բագուն, կը վարձատրեն հնչիւն ոսկիներով գործաւորներին և ապա յանձնելով քաղաքը «բանւորներին և նաւասատիներին» կհեռաւնան:

Եւ ողեսրւած այդ պերսպեկտիվներով, խարւած սոցիալ-դաւաճանների խոստութերից նաւասահիների, զինւորների և բանւորների լախաղոյն տարրերը պահանջում են «հրաւիրել» այնքան «գեհաննեց» և բարեհոգի անդլիացիներին:

Բանւորական և Զինւորական Պատգամաւորների Խորհրդի սոցիալ-դաւաճանն հուսակցութիւնները խրախուսւած ոչդ բորբից միանում են նաւասատիների ներկայացուցիչների հետ և ձայնների մեծամասնութեամբ ընդունում են մի բանաձե, որի համաձայն անդլիացիների ներմուտքը ցանկալի և ընդունելի է համարւում: Խսկոյն, հենց դրանից յետոյ հեռազիրներ են ուղարկւում էնդէլի ու Բագուն են հրաւիրւում անդլիացիները...

Բագւի ամբողջ հակայեղափախական բանակը ստքի է կանգնում: Կազմակերպւում են նոր զօրամասեր... Եւ միաժո-

մանակ զինւորական նաւերը պատրաստում են իրենց թնդանօթները մեծամասնականներին շարդելու համար...

Այդպիսի պարագաներում մնում էր միայն մի ելք—հրաժարւել իշխանութիւնից: Այլևս ոչ մի ընդդիմաշբութիւն հնարաւոր չէր, քանի որ ամբողջ բանւորութիւնը, զօրամասերն և նաւաստիները կուրացած անդիմական համհարդների խոստութերից միայն Անդիմից էին սպասում տմեն ինչ...

Բագրի Խորհրդավին կռավավարութիւնը հրաժարական է տալիս: Նո աւելորդ է համարում ապարդիւն արիւնհեղութիւնը, որովհետև կանխօրէն նախազդում է, որ նոր քաղաքացիուն պատերազմում պիտի լաղթանակեն վերջին հաշում կամ ոոցիալ-դաւանանները կամ տանկական իմպերիալիստները: Սակայն այդ հրաժարականը ևս չի դիւրացնուժ Բագրի դրութիւնը:

Բագրում հաստատում է նոր, հակալեղափօխական մի կռավավարութիւն, այսպէս կոչւած «Ժամանակաւոր Գործադիր Կօմիտէի և Ցենտրուկառապիի» դիկտատուրան:

Ժամանակաւոր Գործադիր Կօմիտէի» մէջ մտնում էին էսէրները, մենշևիկները և դաշնակցականները, իսկ Ցենտրոկառապիի անդամներն էին անդոօֆիլ նաւաստիները: Այդպիսով նոր «կռավավարութիւնը» կազմւած էր բացառապէս անդիմական իմպերիալիստների կողմանիցներից:

Մտանալով այդ կռավավարութեան «հրաւերը» անդիմացիները շտապում են դէպի Բագրու ու ալգուեղ նրանք գտնում են օիրալիքը ընդունելութիւն: Անդիմիացիները լայտարարում են, որ նրանք եկել են բնակիչներին օգնելու և ազատազերու նպատակով, որ նրանք ամենեին չեն միշամտի ներքին գործերին այլ կրաւականանան լոկ զօրամասերի կազմուերազման գործով: Բագրի ոոցիալ-դաւանանների կողմից՝ Ա. Ի. Ուլօն (մենշևիկ), Վ. Ե. Լունցը (էսէր) և Մ. Էլիք-Ելչեանցը (դաշնակցական) իրենց կողմից ոգեսրւած նառեր են արտասանում ի պատիւ այնքան բարեհոգի անդիմացիների և խոստանում են ամեն կերպ օգնել և օժանդակել իրենց բարերար-

Ներին... Դրանից յետոյ սկսուում է բարեբարների գործունեութիւնը:

Ամենից առաջ ձերբակալուում են մեր 26 ընկերները, Բագրի այն 26 կոմիտարները, որոնք անհրաժեշտ են համարում մեկնել գէպի Խորհրդավիճ Ռուսաստան: Մեր ընկերների տեսակէտով այլևս աւելորդ և անհնարինն էր մնալ անգիտական քաղաքաւմ: Որպէս Խորհրդավիճն իշխանութեան ծառայողներ նրանք չէին կարող իրենց ներկայութեամբ սրբագործել դաւաճանների լոնցում: որ քաղաքականութիւնը: Այդ պատճառով նրանք որոշում են հեռանալ բոլոր բոլշևիկական գորամասերի հետ միասին...

Անգլիացիների համար դա այնքան էլ ցանկալի չէր: Անգլիացիները գիտէին, որ Բագրւալ 26 կոմիտարների կէսը ներկայացնում է Կովկասեան պրոլետարիտատի ղեկավար մարմինը: Նրանց հոմար պարզ էր, որ այդ մարմինը նախիսկ հեռանալով Բագրւից կարող է յետագալում խմբել Կովկասեան մասսաները և քանդել անգլիացիների ոլքը: Եւ ահա հենց դրա առաջն առնելու համար անգլիացիները սրոշում են ձերբակալել մեծամասնականների ղեկավարներին: Այդ սրոշումը կատարում են Բագրւի սոցիալ-դաւաճանները՝ մենշևիկական-էռերսկան և դաշնակցական կուսակցութիւնները...

Դրանից յետոյ սկսուում է քաղաքի «պաշտպանութեան» դրսքը: Առաջնանարար Բագրւալ սոցիալ-դաւաճաններից կազմւած Փիկախւ խորհուրդը յետ է բաշւում: Քաղաքի միտի աիրականները դառնում են անգլիացիները: Սակայն ոչ զրա՞նը և ոչ էլ դրանց սպասաւորող սոցիալ-դաւաճանները չեն կարողանում պաշտպանել Բագրւալ:

Քաղաքի գրութիւնը դառնում է օրբստորէ աւելի և աւելի ծանր... Անգլիացիների հասցրած ռազմական օդնութիւնը լինում է չափազանց աննշան: Օտարերկրեայ բարերարներից յետոյ պարենաւորման մուտքը գրեթէ դադարում է: Աւելի ես ծանրանում է քաղաքի կազութիւնը շնորհիւ Բագրւի շրջակայ գիւղացիների լարձակումների: Ավշերօնեան դիւղացիները թէե անբաւական էին Բագրւի Խորհրդավիճն իշ-

խանութեան տնտեսական քաղաքականութիւնից այնուամենալին է չէին վատահանում ենել բանւորա-դիւղացիական իշխանութեան դէմ: Խսկ ալժմ, խորհրդացին կառավարութեան տապալումից յետոյ բոլոր այդ գիւղերը բացարձակ կերպով արշաւանք են սկսում Բագւի դէմ: Սոցիալ-դաւաճանների սպաշտօնական օրդանը հազորդում է, որ Բագւի ճգնաժամը արագացրել են հէնց այդ գիւղերը: Ալպէս թէ այնպէս Բագուն չի կարողաւնում դիմանալ և ընկնում է:

Դրանից յետոյ անգլիացիները, իհարկէ, շատապում են վախչել—իսկ քաղաքում մնացած խաղաղ ազգաբնակչութիւնը զոհ է գառնում արիւնաբրու վահմակներին: Երեք օր ու գիշեր քաղցած և գաղաղած տաճկա-թիւրքական կատաղած բանդաները պատում են քաղաքում, կոտորում բոլորին, աւերում և թալանութ ամեն ինչ: Բագւում տրագիքական այդ օրերի ընթացքում զոհւում է 20,000-ից աւելի ժողովուրդ... Պէտք է նկատել այսուեղ այն, որ իր ժամանակ խորհրդացին իշխանութեան հրահանգի համաձայն քաղաքի խաղաղ ազգաբնակչութեան մնշող մեծամասնութիւնը պատրաստում էր նաւերի վրայ հեռանալ քաղաքից: Խորհրդակին իշխանութիւնը այդ խաղաղ ընակչութեան էվակուացիայի համար ձեռնարկել և կազմակերպել էր որոշ միջոցներ...

Անգլիացիների գալուց յետոյ բոլոր այդ ժողովուրդը՝ շրացած սցիալ դաւաճանների խոսաւթերից նորից քաղաք է մանում և առանց տարակուսանքների մնում է Բագւում ապաւիներով անգլիացիներին: Սոկայն «Եւրոպացի» այդ աղատարարները վճռական բօպէին թողնում են քաղաքը և ընակչութիւնը իր միամտութեան և անգլիասիրութեան շնորհիւ ահագին զոհեր է տալիս: Ալդպիսով Բագւի աղատարարները ոչ միայն չեն աղատում քաղաքը, այլ աւելի և ծանր կացութիւն են առեղծում քաղաքի բազմահազար բնակչութեան համար: Չնայած դրան այդ միևնուն «բարեբարները» կարծ ժամանակից յետոյ նորից քաղաք են մտնում և նորից ամբարտաւան կերպով հանդիս են դալիս, որպէս կովկասեան ժողովուրդների հօգանաւորողներ:

Այս անդամ արդէն նրանք առանց վարանութերի պատռում են իրենց դիմակները և ամենացինիկ կերպով վերահաստատում են բռնակալական կարգերը:

Բագւում հաստատում է հողաբերերի և կալւածատէրերի բացարձակ դիկտատուրա: Այսքան ժանր կացութիւն է ստեղծում ալյտեղ, որ նոյնիսկ անդիմացիներին հրաւիրող էսէրներն և մենշերիները հնարաւոր են համարում բողոքել օտարերկրեալ «բարերարների» արտասովոր կարգադրութիւնների դէմ:

Բագւի պլոյետարիատը ճանաչելով անդիմացիներին արթնանում է վերջնականապէս: Եւ այսօր նա իր մնշող մեծամասնութեամբ եկել է այն վճառկան համոզման, որ միջիայն խորհրդապին իշխանութիւնն է կարող բարելաւել ժողովրդական մասսաների կացութիւնը և իրական կարգ ու կանոն հաստատել համայն Անդրկովկասում:

\* \* \*

Փախչելով Բագւից անդիմացիները չեն մոռանում Բագւի մեծամասնականներին: Մի կեզտոտ և ստոր դաւանանի ցուցմունքը նրանք նորից իրենց ձեռքն են ճանկում 26 կոմիսարներին և այս անդամ արդէն բանտարկում են այն կրասնափողսկում, ուր աիրում էին գարձեալ սոցիալ-դաւանանները: Եւ հենց գրանց համաձայնութեամբ էլ նրանք լեռագալում դուրս են հանում բանակից մեր ընկերներին և կատարում են այն գաղանի սիրագործութիւնը, որի մանրամասնութիւնների հետ կարսղ է ժանօթանալ ընթերցողը ժողովածուի մէջ տպւած գոկումէնաներից:

Մեզ համար մի բան ախներև է: Այդ ա'յն է, որ թէ, խորհրդապին իշխանութեան անկանը, թէ՝ անդիմացիների ներմուտքին և Բագւի ալնքան տրագիֆական դէպքերին և թէ՝ մանաւանդ մեր ընկերներին կովկասեան պրոլետարիատի լաւագոյն ներկալացուցիչների գնդակահարմանը նպաստել են ամենից առաջ սոցիալ-դաւանան կուսակցութիւնները իրենց ստոր և երկդիմի քաղաքականութեամբ: Այսօր մանաւանդ

զա ռւելի քան ակնկալանի է։ Այդ պիտի յիշեն բոլոր Կովկասեան Բանւորները։ Այդ պիտի յիշեն մանաւանդ նրանք, որոնք մինչև այժմ ընթացել են անզիտակցորար այն ուղիով, որը Կովկասի համար ստեղծել է այնքան ժանր և արագիքական կացութիւն։



Հայոց  
418

Ա. ԿԱՐԻՆԵԱՆ

ԲԱԳՈՒՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

(304.)

27eу  
418